**Հավելված 1**
Տնօրինության 28.02.2019թ. թիվ 07 որոշման

# «TRAVEL BOX» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

**Խմբագրություն՝ խմբ. TB01**
**(Ակտիվի դաս՝ հրապարակային)**

## 1. Ի՞ՆՉ Է «TRAVEL BOX» ԾՐԱԳԻՐԸ

«TRAVEL BOX» ծրագիրն արտերկիր մեկնողների աջակցության ապահովագրություն է՝ նախատեսված բազմակի ուղևորությունների մեկնող անձանց համար:

## 2. Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՎԵԼ

Ծրագրի շրջանակներում ապահովագրվում է մինչև 85 տարեկան ցանկացած ֆիզիկական անձ:

## 3. Ի՞ՆՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ

«TRAVEL BOX» ծրագրի շրջանակներում հատուցման ենթակա են՝

- *անհետաձգելի (շտապ) բժշկական ծառայության ծախսերը,*
- *բուժտրանսպորտային ծառայությունների ծախսերը,*
- *հայրենադարձության հետ կապված ծախսերը,*
- *ծախսերը, որոնք իրականացվել են Ապահովագրական պատահարի մասին Աջակցող ընկերությանը կամ Ապահովագրողին տեղեկացնելիս:*

## 4. Ի՞ՆՉ ԾԱԾԿՈՒՅԹ Է ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ապահովագրական գումար՝ **30 000 ԵՎՐՈ**
Ապահովագրության տարածք՝ **ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀ**
1 տարվա ընթացքում ուղևորությունների քանակ՝ **ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ**

| Ապահովագրության ժամկետ | Տարեկան ապահովագրավճար |
|---|---|
| 1 տարվա ընթացքում 15 օր | **4 000 ՀՀ դրամ** |
| 1 տարվա ընթացքում 30 օր | **6 000 ՀՀ դրամ** |
| 1 տարվա ընթացքում 60 օր | **9 000 ՀՀ դրամ** |
| 1 տարվա ընթացքում 90 օր | **12 000 ՀՀ դրամ** |

## 5. Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

5.1. Ապահովագրվող անձի անձը հաստատող փաստաթուղթ,
5.2. Պայմանագիր կնքող անձի անձը հաստատող փաստաթուղթ (եթե վերջինս Ապավագրվող անձը չէ):

## 6. Ի՞ՆՉ ԱՆԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Շտապ բժշկական օգնություն ստանալու համար անհրաժեշտ է կապ հաստատել մեր գործընկեր «**Եվրոպ ասսիսթանս ԱՊՀ**» աջակցող կազմակերպության հետ՝ նշված շուրջօրյա գործող հեռախոսահամարներից մեկով.

| | |
|---|---|
| **Ռուսաստան և այլ երկրներ** | **+7 495 787 21 78** |
| **Թուրքիա** | **+90 212 337 20 93** |
| **Հունաստան** | **+30 289 704 17 77** |

## 7. ԾՐԱԳՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ»-ի ապահովագրության պայմանագիրը ընդունվում է աշխարհի բոլոր դեսպանատների և հյուպատոսությունների կողմից,
7.2. 65-ից բարձր տարիքի անձի համար ապահովագրավճարը չի ավելանում, եթե ընտրված է միայն հայրենադարձության հետ կապված ծախսերի ռիսկը
7.3. Չհատուցվող գումար չի կիրառվում,
7.4. Մենք ապահովում ենք շուրջօրյա և բազմալեզու սպասարկում: